Ապարանի բնապահպանական տեղեկատվության հասարակական Օրհուս կենտրոն

# ՉՈՐՍԱՄՍՅԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Սեպտեմբեր - դեկտեմբեր

2016թ.

# 2016թ. Կենտրոնի գործունեությունը

«Աջակցել կառավարությանը և քաղաքացիական հասարակությանը լուծելու շրջակա միջավայրին առնչվող հարցերը» ծրագրի շրջանակում:



Ապարանի բն. տեղեկատվության հասարակական (Օրհուս) կենտրոնը 2016թ. գործունեությունն ըստ պայմանագրի սկսել է սեպտեմբերի 1-ից

# 2016թ. Սեպտեմբեր – դեկտեմբեր . Կենտրոնի գործունեության ուղղվածությունը ելնելով ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔԻ պահանջներից և կենտրոնի գործունեության տարեկան ԾՐԱԳՐԻՑ

Աջակցել ՏԻՄ-երին

- համայնքի ամենասուր բնապահպանական հիմնախնդիրների բացահայտման, վերհանման և շահագրգիռ կողմերի հետ համատեղ ուժերով լուծման ուղությամբ:
- շրջակա միջավայրի կառավարման, Օրհուսի կոնվենցիայի իրականացման կարողությունների զարգացմանը, առանձնահատուկ ուշադրություն դարձնելով այն գործողություններին, որոնք ուղղված են հանրության իրազեկության և որոշումների կայացման գործընթացին մասնակցության մակարդակի բարձրացմանը,
- քաղաքապետարանի տարեկան աշխատանքային պլանի բարելավման ուղղությամբ (ներկայացնել առաջարկներ և նախանշել առկա խնդիրի լուծման կամ մեղման ուղիները) :
- համայնքի սոցիալ - տնտեսական զարգացման հնգամյա պլանի բնապահպանական մասի նախագծային աշխատանքերին
- բնակչության էկոկրթության, էկոդաստիարակության, էկոգիտակցության բարձրացմանը

# Օրհուս կենտրոնի գործողությունները - սեպտեմբեր 2016թ



1. Աշխատաքնային հանդիպումներ և քննարկումներ են իրականացվել համայնքի քաղաքապետի, փոխքաղաքապետի, գյուղատնտեսության և բնապահպանության հարցերի գլխավոր մասնագետի, անտառտնտեսության պետի հետ համայնքի բնապահպանական խնդիրների վերհանման նպատակով:

2. իրականացվել են շրջայցեր համայնքում, կատարվել են համայնքի բնապահպանական սուր խնդիրների նկարահանումներ, անցկացվել են տեղերում զրույցներ բնակիչների հետ խնդիրների վերաբերյալ:

Ապարանի բնապահպանական խնդիրները նկարներով՝ առջև

# Օրհուս կենտրոնի գործողությունները - հոկտեմբեր 2016թ

1. Հոկտեմբեր ամսվա ընթացքում բնակչության մասնակցությունը խթանելու և համայնքային խնդիրների լուծմանը ներգրավելու ուղղությամբ Օրհուս կենտրոնն իրականացրել է կլոր սեղան քննարկումներ, հանդիպումներ, այցելություններ

2. Քննարկումների ժամանակ մասնակիցները իրազեկվել են Օրհուսի Կոնվենցիայով, ՀՀ <<Տեղական ինքնակառավարման մարմինների մասին>> օրենքով սահմանված տեղեկատվություն ստանալու և որոշումների կայացմանը մասնակցելու իրենց իրավունքի մասին

3. Կատարվել են առաջին քայլերը համայնքի բնակիչների շրջանում համայնքի ավագանու նիստի օրակարգում իրենց համայնքին առնչվող համայնքային խնդիրների վերաբերյալ հարց ընդգրկելու, առաջարկություն կատարելու նախաձեռնությամաբ հանդես գալու մշակույթի, պրակտիկայի ձևավորման ուղղությամբ.

# Օրհուս կենտրոնի գործողությունները - հոկտեմբեր 2016թ



# Օրհուս կենտրոնի գործողությունները - հոկտեմբեր 2016թ



25.10.16թ.

Կլոր սեղան – քննարկում ուսուցչական կոլեկտիվի անդամների հետ թափոնների կառավարման արդյունավետության բարձրացման՝ համայնքի աղբահանության, ջրային ռեսուրսների պահպանման /Քասաղ գետ/ խնդիրների վերաբերյալ, քաղաքի սանիտարահիգիենիկ վիճակի բարելավմանը աջակցելու նպատակով:

Տեղի ունեցած քննարկումների ժամանակ մասնակիցների կողմից ներկայացվել են առաջարկներ այդ խնդիրների լուծման և քաղաքի էկոլոգիական իրավիճակի բարելավման ուղղությամբ:

Առաջարկները ներկայացնել են համայնքի ղեկավարին ավագանու նիստում քննարկելու նպատակով՝ համայնքի կողմից կազմվող հնգամյա զարգացման ծրագրի բնապահպանական մասի մեջ ներառելու համար.

# Օրհուս կենտրոնի գործողությունները - հոկտեմբեր 2016թ



# Օրհուս կենտրոնի գործողությունները - նոյեմբեր 2016թ

**28.11. 2016թ**

կենտրոնի փորձագետներ նիստ

Օրակարգում՝

- **2016թ երեք ամիսների կատարված աշխատանքների ներկայացում, բնապահպանական խնդիրների քննարկում համայնքի սոցիալ - տնտեսական զարգացման հնգամյա պլանի կազման**
աշխատանքներին աջակցելու նպատակով

- << Կանաչ >> էկոնոմիկա և ռեսուրսների արդյունավետ օգտագործումը. Ավստրիական առաջավոր փորձի / թափոնների արդյունավետ կառավարում/ ներկայացում.





Նոյեմբերի 21–ից 23–ը ընկած ժամանակահատվածում կենտրոնի համակարգողը մասնակցել է ԵԱՀԿ քարտուղարության նախաձեռնությամբ տեղի ունեցող միջազգային հանդիպմանը <<Օրհուս կենտրոնների տարեկան հանդիպում 2016>>-ին Վիեննայում.

հանդիպումն ուղղված էր ԵԱՀԿ և Օրհուս կենտրոնների ներկայացուցիչների, Օրհուսի Կոնվենցիայի ազգային համակարգողների միավորմանը, կենտրոնների գործունեության և Օրհուսի Կոնվենցիայի իրականացման առաջավոր փորձի ներկայացմանը, ձեռքբերումների և բացթողումների քննարկմանը, փորձի փոխանակմանը, համագործակցության ամրապնդմանը:

Վիեննյան հանդիպման ժամանակ առանձնահատուկ նշանակություն տրվեց կանաչ էկոնոմիկայի և ռեսուրսների արդյունավետ օգտագործման գաղափարին: Շեշտադրում կատարվեց Օրհուս կենտրոնների ներուժի ամրապնդմանը , հեռանկարում, իրենց երկրներում Կանաչ էկոնոմիկայի անցման գործընթացում կենտրոնների ակտիվ մասնակցության առումով :








# Օրհուս կենտրոնի գործողությունները - դեկտեմբեր 2016թ

Կենտրոնի համակարգողի կողմից կազմվել է փորձագիտական զեկույց համայնքի բնապահպանական խնդիրների վերաբերյալ.

Փորձագիտական զեկույցում ներկայացվել են առաջարկներ համայնքի բնապահպանական խնդիրների լուծման ուղիների վերաբերյալ.

Փորձագիտական զեկույցը ներկայացվել համայնքի ղեկավարությանը համայնքի սոցիալ – տնտեսական զարգացման հնգամյա ծրագրի բնապահպանական մասում ներառելու առաջարկությամբ.

# ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

## ԱՊԱՐԱՆԻ ՕՐՀՈՒՍ ԲՏՀԿ

20 Դեկտեմբեր 2016 թ.

համակարգող՝ Նատալիա Մանուկյան
հեռ. բջջ. /374 34/ 22-49-26
հեռ. /374 252/ 6-23-60

E-mail: info_aparan@aarhus.am